## ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հայաստանում գենդերի վերահաստատման գործընթացն իրականացվում է իրավական կարգավորումների բացակայության պայմաններում գենդերի վերահաստատման գործընթացը հաճախ հանգեցնում է ոչ ֆորմալ և երբեմն ռիսկային պրակտիկաների, կարող է պարունակել կոռուպցիոն ռիսկեր: Պետական քաղաքականության բացը խոչընդոտում է տրանս անձանց առողջության և անվտանգության իրավունքի իրացմանը: Անհրաժեշտ է ապահովել անվտանգ և հարգալից միջավայր և՛ գենդերի վերահաստատման ծառայություններ տրամադրող մասնագետների համար, և՛ տրանս անձանց համար: Հետևաբար, առաջարկում ենք ներդնել խնդրի հասցեավորման նոր քաղաքականություն և գործնականում ձեռնարկել հետևյալ միջոցառումները.

- Գենդերի իրավական ճանաչման և վիրահատական միջամտությունների հարցերը օրենքի բացակայության պայմաններում կազմակերպել ներքին կարգավորումների ու հնարավոր մեխանիզմների կիրառման դաշտում: Ներքին հրամանների, քայլերի հաջորդականության կամ հստակ ընթացակարգերի առկայությունը հնարավոր կդարձնի ապահովել առնվազն որոշակի գործողությունների շրջանակ առողջապահության և արդարադատության նախարարությունների և համայնքային աջակցություն տրամադրող հասարակական կազմակերպությունների միջև:
- Առողջապահության ու աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններին, ինչպես նաև մասնագիտական հանրույթին՝ ասոցացիաներին, կրթական կառույցներին առաջարկում ենք ապահովել որակյալ ու վերապատրաստված մասնագետներ, որոնք պաշտպանված լինելով վիրահատությունների գրանցմամբ ու դեղերի հաստատմամբ, կարող են մասնագիտանալ տրանս անձանց գենդերի վերափոխման գործընթացներով և ընթացակարգերով և տրամադրել պատշաճ աջակցություն՝ չթաքնվելով: Սա հնարավոր է իրականացնել տրանս անձանց առողջության համաշխարհային մասնագիտական ասոցիացիայի խնամքի ստանդարտներ (WPATH) ուղեցույցին համապատասխան:
- Առողջապահության նախարարությանը առաջարկում ենք գործընկերային և աջակցող հարաբերությունների հաստատում տրանս անձանց խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ՝ հետևելով միջազգային մասնագիտական ուղեցույցներին, ընթացակարգերին՝ վերապատրաստելով տրանս անձանց հարցերով զբաղվող մասնագիտական հանրույթի, մասնագիտացած բժիշկների, զգայուն բուժանձնակազմի, տրանս անձանց հոգեկան առողջության ու վերահաստատման ընթացքում հոգեբանական աջակցության, սոցիալական փոփոխության ընթացքում աջակցման ու ֆինանսական կարիքները ու համակարգային բացերի հասցեագրման ուղղությամբ:
- Համայնքային հարցերով ու աջակցությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին առաջարկում ենք լրացուցիչ ջանք ներդնել ու գործողությունների, աջակցության պլան մշակել առկա պայմաններում մարզերում բնակվող տրանս անձանց առողջապահական կարիքները հասցեագրելու ուղղությամբ: